Հավելված 2

2024 թ.  Հունվարի 3
կնքված N «ԴՏՊ-1141-11018/24ԵՊԿՏ ԵՊԿՏ պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն -տարեկան**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «ՍոցիոԲերդ» երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1141-11018/24ԵՊԿՏ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2024 - 30.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2024 - 30.12.2024 |
| **Ներկայացման օր** | 20.12.2024թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Լուսիկ Աղաբաբյան<br>Ծրագրի համակարգող |

**2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։**

Համաձայն աշխատանքային պլանի և Պայմանագրի թիվ 7 հավելվածի, հաշվետու ժամանակահատվածում, այն է հունվար-դեկտեմբեր 2024թ., նախատեսված են եղել և իրականացվել են հետևյալ ծրագրային գործողությունները.

1. Նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում լրացուցիչ մասնագետների ներգրավում (2 սոցիալական աշխատող, 2 հոգեբան 1 անձի զարգացման, 1 կյանքի հմտությունների մասնագետ, 2 արտթերապևտ),
2. Պոտենցիալ շահառու երեխաների/ ընտանիքների ցանկի հստակեցում՝ ՄՄԾ ՏԿ-ի և ՏԻՄ-ի հետ համատեղ,
3. Պոտենցիալ շահառու երեխաների/ ընտանիքների կարիքների գնահատում՝ համաձայն հաստատված ցանկի,
4. Երեխաների հետ աշխատանքի անհատական սոցիալական ծրագրերի մշակում,
5. Երեխաների զարգացման և տարիքային առանձնահատկությունների հիման վրա խմբերի ձևավորում՝ սոցիալ-հոգեբանական, արտթերապևտիկ, կյանքի հմտությունների խմբային աշխատանքներում ներգրավման համար,
6. Երեխաներին սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում (անհատական և խմբային),
7. Երեխաներին հոգեբանական թերապևտիկ ծառայությունների տրամադրում (անհատական և խմբային),
8. Երեխաներին արտ-թերապևտիկ ծառայությունների մատուցում (անհատական և խմբային),
9. Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում (անհատական և խմբային),
10. Անձի զարգացման ուղղված ծառայությունների մատուցում (մասնագիտական կողմնորոշում, մեդիագրագիտություն, ակտիվ քաղաքացի, համայնքային նախաձեռնություններ),
11. Իրավական իրազեկման նպատակով՝ տեղեկատվական հանդիպումներ երեխաների համար,
12. Երեխաների և ծնողների համար ռելաքսացիոն խմբակների կազմակերպում՝ արտթերապևտիկ տարբեր տեխնիկաների կիրառմամբ,
13. Ըստ բացահայտված կարիքի՝ շահառուի անձնական օգնականի ծառայության տրամադրում,
14. Ըստ անհրաժեշտության՝ սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ,

15. Քաղաքացիական ակտիվացմանն ուղղված դասընթացներ երեխաների/երիտասարդների համար,
16. Սոցիալական միջոցառման կազմակերպում Ծրագրի շահառու երեխաների ներգրավմամբ,
17. Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթացներ երեխաների/երիտասարդների համար,
18. Մասնագիտական կողմնորոշման նպատակով ուսումնական այցերի իրականացում,
19. Ընտանիքին սոցիալական խորհրդատվության (այդ թվում ուղղորդումներ),
20. Ծնողների կարիքների հիման վրա փոխօգնության խմբերի ձևավորում և սեսիաների/հանդիպումների իրականացում,
21. Կյանքի կազմակերպման հմտությունների զարգացմանը և իրավական իրազեկմանն ուղղված դասընթացներ ծնողների համար,
22. Ըստ անհրաժեշտության՝ առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում,
23. Ընտանիքներին բնաիրային աջակցության տրամադրման նպատակով ռեսուրսների մոբիլիզացում,
24. Շահառու երեխաներին սննդային փաթեթի տրամադրում,
25. Շահառուներից ծառայության որակի վերաբերյալ տվյալների հավաքագրում (անանուն),
26. Ֆինանսական հաշվետվությունների և ծառայություններ ստացած երեխաների տվյալների բազայի կազմում և տրամադրում,
27. Բովանդակային եռամսյակային հաշվետվությունների կազմում և տրամադրում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանո՞վ են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| | |
|---|---|
| Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումներն իրականացվել են համաձայն աշխատանքային պլանով սահմանված ժամանակացույցի: Հաշվետու ժամանակահատվածում 2024թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսների աշխատանքային պլանից շեղումներ չեն եղել: Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները/գործողությունները նպաստել են հետևյալ արդյունքների ձեռք բերմանը, մասնավորապես. | |
| **Գործողություն/ միջոցառում** | **Հիմնական արդյունքներ** |
| • Նախապատրաստական աշխատանքներ մասնագետների ներգրավում<br>• Պոտենցիալ շահառու երեխաների/ ընտանիքների ցանկի հստակեցում՝ ՄՄԾ ՏԿ-ի և ՏԻՄ-ի հետ համատեղ<br>• Պոտենցիալ շահառու երեխաների/ ընտանիքների կարիքների գնահատում՝ համաձայն հաստատված ցանկի<br>• Երեխաների անհատական սոցիալական ծրագրերի մշակում/ վերանայում<br>• Երեխաների զարգացման և տարիքային առանձնահատկությունների հիման վրա խմբերի ձևավորում՝ սոցիալ-հոգեբանական, | 2024թ-ին ծրագրի շրջանակում՝ որպես ծրագրային աշխատակազմի անդամներ, ներգրավվել են հետևյալ մասնագետները. 2 սոցիալական աշխատող, 2 հոգեբան, 1 անձի զարգացման մասնագետ, 1 կյանքի հմտությունների մասնագետ և 2 արտթերապևտ:<br>Հաշվետու տարում, Կենտրոնի մասնագիտական թիմը՝ ՄՄԾ Բերդի ՏԿ-ի և Բերդի համայնքապետարանի սոցիալական աշխատողների հետ  համատեղ քննարկել և հստակեցրել են պոտենցիալ շահառուների ցանկերը: Համաձայնեցված ցանկի համաձայն, Ծրագրի սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է տնային այցելություն 151 ընտանիքի, որի արդյունքում ծրագրում ընդգրկվել է 161 շահառու եխա *(Կան ընտանիքներ, որտեղից ընդգրկված է 2 և ավել երեխա),* մասնավորապես, Բերդ համայնքից՝ 54 շահառու երեխա, Վ. Կարմիրաղբյուր համայնքից՝ 22 շահառու երեխա, Մովսես համայնքից՝ 36 շահառու երեխա, Նավուր համայնքից՝ 36 շահառու երեխա,և Տավուշ համայնքից՝ 13 շահառու երեխա:<br>Վերոնշյալ համայնքներից, ծրագրում ներառված է Արցախից բռնի տեղահանված ընտանիքներից 16 շահառու երեխա: Ծրագրում նեռառվել է հաշմանդամություն ունեցող 3 երեխա/շաքարային դիաբետ, դաունի համախտանիշ/:<br>Շահառու երեխաների կարիքների գնահատման, երեխաների ծնողների հետ քննարկման արդյունքում՝ ծրագրի բազմամասնագիտական թիմի կողմից մշակվել, ապա յուրաքանչյուր եռամսյակում վերանայվել են շահառու 161 (հարյուր |

| | |
|---|---|
| արտթերապևտիկ, կյանքի հմտությունների խմբային աշխատանքներում ներգրավման համար<br>• Երեխաներին սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում<br>• Երեխաների հոգեբանական թերապևտիկ ծառայությունների տրամադրում<br>• Երեխաներին արտ-թերապևտիկ ծառայությունների մատուցում/անհատահան, խմբային/<br>• Երեխաներին արտ-թերապևտիկ ծառայությունների մատուցում<br>• Անձի զարգացման ուղղված ծառայությունների մատուցում (մասնագիտական կողմնորոշում, մեղիագրագիտություն, ակտիվ քաղաքացի, համայնքային նախաձեռնություններ)<br>• Երեխաների և ծնողների համար ռելաքսացիոն խմբակների կազմակերպում՝ արտթերապևտիկ տարբեր տեխնիկաների կիրառմամբ | վաթսունմեկ) երեխայի անհատական սոցիալական պլանները՝ համաձայն որի որոշվել է երեխայի հետ հետագա աշխատանքի ընթացքը կամ ավարտը:<br>Երեխաների զարգացման և տարիքային առանձնահատկությունների հիման վրա ձևավորվել են ծառայություններ ստացող շահառու երեխաների խմբերը (7 խումբ, յուրաքանչյուր խմբի հետ շաբաթական 2-3 հանդիպում): Հանդիպումներն իրականացվել են Կենտրոնում, Տավուշի դպրոցում, Նավուրի գյուղապետարանում, Մովսեսի մշակույթի տանը, Վերին Կարմիրաղբյուրի դպրոցում:<br>Երեխաներին և նրանց ծնողներին տրամադրվել են անհատական և խմբային ծառայություններ, այդ թվում՝ հոգեբանական թերապիա, արտթերապիա, ռելաքսիացիոն սեսիաներ, կյանքի հմտությունների և անձի զարգացմանն ուղղված դասընթացներ, սոցիալական աշխատողների խորհրդատվություն:<br>Ծառայությունների տրամադրման արդյունքում 65 երեխայի դեպքում (կազմում է շահառուների թվի 40.37%-ը) անհատական սոցիալական ծրագրով նախատեսված նպատակները ձեռք են բերվել, իսկ անմիջական միջամտության ծառայությունների մատուցումն ավարտվել: Ներկա փուլում, երեխաները գտնվում են Կենտրոնի շարունակական վերահսկողության ներքո (առնվազն վեց ամիս):<br>56 շահառուի դեպքում (36%-ը) անհատական և ընտանեկան միջամտության ծառայությունների արդյունքների ամրապնդման նպատակով՝ երեխաները ընդգրկվել են խմբային աշխատանքներում:<br>Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող 1 երեխայի հետ իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված կրթական հաստատություն կանոնավոր հաճախման ապահովմանը: Երեխայի, ընտանիքի, դպրոցի, համայնքապետարանի և ոստիկանության հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում երեխան ներկայումս կանոնավոր կերպով հաճախում է ավագ դպրոց:<br>Ծառայություններում ընդգրկված վարքային խնդիրներ ունեցող 36 երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատանքն իրականացվել է վարքային խնդիրներ ունեցող երեխաների առանձին սոցիալ-հոգեբանական բաղադրիչի շրջանակում, |

| | |
|---|---|
| • Կյանքի կազմակերպման հմտությունների զարգացմանն ուղղված հանդիպումների իրականացում շահառու երեխաների համար<br>• Քաղաքացիական ակտիվացմանն ուղղված դասընթաց երեխաների/երիտասարդների համար, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթաց երեխաների/երիտասարդների համար<br>• Ընտանիքին սոցիալական խորհրդատվության (այդ թվում ուղղորդումներ)<br>• Ըստ անհրաժեշտության՝ առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայությունների տրամադրում<br>• Ըստ բացահայտված կարիքի՝ շահառուի անձնական օգնականի ծառայության տրամադրում | ապահովելով համալիր արձագանքը երեխայի վարքին առնչվող հոգեբանական և սոցիալական գործոններին:<br>Քաղաքացիական ակտիվացման, մեդիագրագիտության, մասնագիտական կողմնորոշման նպատակով երեխաների/երիտասարդների հետ իրականացվել են տարբեր թեմաներով հանդիպումներ՝ «Փափուկ հմտություններ», «Թվային աշխարհում անվտանգություն և մեդիա վերլուծություն», «Առաջնորդություն» և այլն: Երեխաների 70%-ը բարելավել են իրենց գիտելիքները՝ մասնակցելով վերը նշված թեմաներով հանդիպումներին: Ի լրումն, Կենտրոնի 25 երեխայի/երիտասարդի ներգրավմամբ իրականացվել են մասնագիտական կողմնորոշման 3 այցեր պետական և հասարակական կառույցներ:<br>Տրամադրված ծառայությունների արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների 62%-ը կարողացել են հաղթահարել իրենց կենսագործունեությանը խոչընդոտող սոցիալ-հոգեբանական խնդիրները, իսկ 38%-ի մոտ գրանցվել է դրական դինամիկա՝ ծառայություն մուտքի փուլի վիճակի հետ համեմատությամբ:<br>Կյանքի հմտությունների զարգացման հանդիպումների արդյունքում երեխաների 72%-ը տիրապետում է էթիկայի, անվտանգության, անձնական հիգիենայի կանոններին՝ վարելով առողջ ապրելակերպ:<br>Ծրագրի ավարտին երեխաների հետ համատեղ իրականացվել է ցուցահանդես: Թերապիաների ժամանակ ստեղծված իրերը 15 օր շարունակ ցուցադրվել են կենտրոնում: Ծնողները, հյուրերը ծանոթացել են երեխաների կատարած աշխատանքներին՝ միևնույն ժամանակ լսելով կենտրոնում մատուցվող ծառայությունների մասին: Հյուրերը բարձր են գնահատել նմանատիպ աշխատանքները, ծառայությունները:<br>Ծրագրի շահառու 140 երեխայի ներգրավմամբ իրականացվել է ամանորյա սոցիալական միջոցառում: Իրականացված միջոցառման արդյունքում երեխաների մոտ ամրապնդվել են շփման և հաղորդակցման, համագործակցային, խմբին պատկանելիության հմտությունները: Կիրառված մոտեցումն օգնել է երեխաներին ազատվել բացասական հույզերից՝ խաղերի և տոնական մթնոլորտ ստեղծելու |

| | |
|---|---|
| • Սոցիալական միջոցառման իրականացում<br>• Ցուցահանդեսի իրականացում<br>• Շահառու երեխաներին սննդային փաթեթի տրամադրում<br>• Կյանքի/կենցաղի/ կազմակերպման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ ծնողների համար<br>• Շահառուներից ծառայության որակի վերաբերյալ տվյալների հավաքագրում<br>• Ֆինանսական հաշվետվությունների և ծառայություններ ստացած երեխաների տվյալների բազայի կազմում և տրամադրում: | միջոցով: Միջոցառման ընթացքում երեխաներն ամփոփել են ամբողջ տարվա իրենց ստացած հմտությունները: Միջոցառման ավարտին երեխաները ստացել են նվերներ և «քաղցր» հյուրասիրություն:<br>Ծրագրի շահառու 3 (երեք) երեխա, ովքեր ունեն առողջական և վարքային խնդիրներ, տարվա ընթացքում օգտվել են անձնական ուղեկցողի ծառայություններից հետևյալ հարցերում՝<br>● անձնական հիգիենայի պահպանման կանոնները,<br>● հագուստ կրելու կանոններ,<br>● սնունդ ընդունելու վարվեցողություն,<br>● բնական կարիքները հոգալու,<br>● տեղափոխումը կազմակերպելու հարցերում:<br>Ծառայություն ստացած ԿԴԻՀ երեխաների 40%-ը ուղղորդվել են մշակույթի տուն, 30%-ը ընդգրկված են համայնքի մշակութային կյանքում՝ մասնակցում են համայնքային մշակութային միջոցառումներին:<br>Շահառու ծնողների 70%-ը/92 ծնող/ մասնակցել են Ծրագրի շրջանակներում կազմակերպված ծնողավարման դասընթացներին:<br>Շահառու ծնողների համար ընդհանուր առմամբ իրականացվել են 9 թեմատիկ դասընթացներ՝ Բերդ, Վերին Կարմիրաղբյուր, Նավուր, Տավուշ, Մովսես համայնքներում, մասնավորապես.<br>• «Արդյունավետ ծնողավարում»- 23 ծնող<br>• «Սթրեսակայունության ապահովում»-21 ծնող<br>• «Անձնական հիգիենա»-17 ծնող<br>• «Ծնողավարման ոճեր»- 13 ծնող<br>• «Դաստիարակման ոճեր»-10 ծնող<br>• «Դեռահասության ճգնաժամ»-9 ծնող<br>• «3 տարեկանի ճգնաժամ»-12 ծնող<br>• «Իմ ընտանիքը»-5 ծնող<br>• «Կյանքի կազմակերպման հմտությունների զարգացում»-13 ծնող |

| | |
|---|---|
| | • «Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի վրա»-23 ծնող<br>Ծրագրի շահառու 10 ծնողի ներգրավմամբ ձևավորվել է ինքնօգնության խումբ և իրականացվել են խմբային սեսիաներ:<br>Սոցիալ-հոգեբանական անհատական խորհրդատվություն է ստացել 78 ծնող:<br>Ծրագրի ընթացքում ծնողների և երեխաների շրջանում իրականացվել են ծառայությունների բավարարվածության գնահատման անանուն հարցումներ (210), որոնց համաձայն ծրագրի շահառու երեխաների 90%-ը (10 տարեկանից բարձր երեխաներն են մասնակցել հարցմանը) և ծնողների 90%-ը  բավարարված են մատուցված սոցիալ-հոգեբանական ծառայություններից:<br>Հաշվետու տարում կենտրոնի սոցիալական աշխատողները պահպանել են մշտական կապ Գյումրու երեխայի տուն ՊՈԱԿ-ում գտնվող երեխայի ծնողների հետ: Տան պայմանները նպաստավոր չեն երեխաների առողջ զարգացման համար՝ հատկապես ձմռան ցուրտ օրերին: Այս պահին ընտանիքում ապրում են 5 անչափահաս երեխաներ, իսկ երեխաներից մեկը՝ 4-րդ երեխան, ով ունի առողջական խնդիրներ, գտնվում է շուրջօրյա խնամքի ծառայությունում: Երեխայի ընտանիքի վերամիավորման նպատակով իրականացվել է 3 հանդիպում շահագրգիռ կողմերի հետ, որի ժամանակ՝ հաշվի առնելով ընտանիքի ոչ նպաստավոր պայմանները, ծնողների առողջական վիճակը, որոշվել է, որ երեխան դեռևս շարունակի մնալ շուրջօրյա խնամքի ծառայությունում: Տունը չունի մուտքի դուռ, պատուհանները ջարդված են, որը լուրջ վտանգ է նաև այս պահին ընտանիքում ապրող երեխաների համար: Հաշվի առնելով ընտանիքի վիճակը՝ Հիմնադրամը ներգրավել է հավելյալ ռեսուրսներ և այս պահին կատարում է աշխատանքներ ընտանիքի տանը դուռ-պատուհաներ տեղադրելու համար, որն ապահով միջավայր կստեղծի երեխաների համար և գուցե հնարավոր լինի նաև երեխային շուրջօրյա խնամքի ծառայությունից վերադարձնել ընտանիք: Ընտանքի ծնողներն ուղղորդվել են առողջության կենտրոն՝ առողջական խնդիրների կարգավորման համար:<br>Կենտրոնի սոցիալական աշխատողները պահպանել են մշտական կապ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի սոցիալական մանկավարժի հետ՝ ստանալով |

| | |
|---|---|
| | տեղեկատվություն այնտեղ գտնվող մեկ շահառու ընտանիքից՝ երեք երեխաների վերաբերյալ: Ընտանիքի երեխաներն այժմ գտնվում են խնամատար ընտանիքում: Սոցիալական աշխատողների կողմից շարունակական աշխատանքներ են իրականացվում երխաների ծնողների հետ:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն ԱՄՀՆ պահանջների՝ կազմվել և յուրաքանչյուր ամիս համապատասխան գրությամբ ներկայացվել են.<br>• ամսական ֆինանսական ծախսերի հաշվետվությունները,<br>• ծառայություններ ստացած երեխաների տվյալները/ցանկը: |

**2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում կատարված հրապարակումները հասանելի են ստորև տրված հղումներով.
https://shorturl.at/nqwEO
https://shorturl.at/R9obc
http://surl.li/mtwtom
http://surl.li/oepnln
https://shorturl.at/Vn3Aq
https://shorturl.at/ABrdL
https://shorturl.at/M517S
https://shorturl.at/XJZ3B
https://shorturl.at/1DqxF

**2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրներից է շահառու երեխաների ծնողների հասանելիությունը հանդիպումներին և թերապևտիկ աշխատանքներին: Մասնավորապես, ծնողների մեծ մասը աշխատանքային գրաֆիկի, ընտանեկան կենցաղային պարտականությունների պատճառով հասանելի չեն աշխատանքային ժամերին:
Արձագանքելով ծագած դժվարությանը՝ ծրագրի սոցիալական աշխատողները և հոգեբանները առանձին հանդիպումներ են կազմակերպել ծնողների հետ ոչ աշխատանքային օրերի և/կամ ժամերի, ինչպես նաև որոշ դեպքերում խորհրդատվությունը տրամադրել հեռակա կարգով, հիմնականում օգտագործելով հեռախոսազանգը՝ որպես միջոց:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Կիրառելի չէ

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Լրացուցիչ ռեսուրսների ներգրավման շնորհիվ՝ շահառու սոցիալապես անապահով, ինչպես նաև տեղահանված շուրջ 70 (յոթանասուն) ընտանիքի տրամադրվել է հումանիտար աջակցություն՝ հիգիենայի, սննդի փաթեթներ, վառելիք (փայտ):